

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100 ԱՄՅԱԿԸ ԵՊՀ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ

Եզնիկ Միրզոյան

ԵՊՀ «ՄԱՐԳԻՍ և ՄԱՐԻ ԻԶՄԻՐԼՅԱՆՆԵՐԻ» ԱՆՎԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Հայոց Մեծ Եղեռնի 100 ամյակը այն տարեթիվն է, որից ցանկացած հայ իր սպասումներն ունի միգուցե բարձրաձայն, միգուցե իր սրտի խորքում: Շատերի մոտ այն կարծիքն է, որ որոշ պետություններ հենց այդ ժամանակ կճանաչեն հայերի ցեղասպանությունը և կդատապարտեն այն:

1965թ. երբ նշվում էր ցեղասպանության 50 ամյակը, հայ ազգը կարծես միասնական-պահանջատեր դարձավ այդ հարցում: Սրա արդյունքում ստեղծվեց հուշահամալիրը: 1995թ.-ին՝ ցեղասպանության 80 ամյակին իր դռները բացեց ցեղասպանության թանգարանը: Ուստի սպասելիքները 100 ամյակին կարելի է անհիմն չանվանել:

Հասկանալի է որ և՛ 50 ամյակի, և՛ 80 ամյակի նախաշեմին կատարվել էր ահռելի աշխատանք, որի արդյունքը միայն երևաց, իսկ գործընթացը՝ ոչ այնքան:

Ներկայումս նույն իրավիճակն է, գրադարանների կողմից կատարվող աշխատանքները չեն երևում, գրադարանների խնդիրն է հետազոտողների համար ապահովել անհրաժեշտ գրականություն իրենց գիտական աշխատանքների, իսկ պաշտոնյաներին՝ իրենց ելույթների համար:

Անհրաժեշտ գրականության ապահովումն ես կբաժանեմ 3 մասի՝ հայաստանում տպագրվող գրականության ապահովում, օտարալեզու գրականության ձեռքբերում և օտարերկրյա ականատեսների վկայությունների թարգմանություններ:

Հայաստանում տպագրվող գրականություն

Այս առումով հիմնական ծանրությունն ընկած է ՀՀ ԳԱԱ մի քանի ինստիտուտների (պատմության, արևելագիտության և այլն), Ցեղասպանության թանգարան ինստիտուտի, ԵՊՀ մի քանի ֆակուլտետների (պատմություն, արևելագիտություն, իրավագիտություն և այլն) և ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի (հատկապես պետք է նշել, որ գործում է ցեղասպանագիտության մագիստրոսական ծրագիր) վրա: ՀՀ ԳԱԱ ինստիտուտների հետ համագործակցության շրջանակներում ԵՊՀ-ն ստանում ենք այս ոլորտում լույս

տեսած գրեթե ողջ գրականության օրինակներ: Նշեմ նաև, որ ինստիտուտներում տպագրված գրքերի մեծ մասի հեղինակները ԵՊՀ դասախոսներ են: Քանի որ ԵՊՀ տպագրած ողջ գրականությունը տնօրինում է ԵՊՀ գրադարանը, ուստի այս ոլորտում գրականության խնդիր չունենք: Կցանկանայի այստեղ նշել, որ վերջին 5 տարում միայն ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի կողմից տպագրվել է ավելի քան 50 անուն գրքեր, որոնց մեծ մասը նվիրված են ցեղասպանագիտությանը:

Հարկ է նշել, որ ԵՊՀ-ում տպագրված ողջ գրականությունը էլեկտրոնային տարբերակով հասանելի է www.armin.am կայքում: Նշված կայքում դուք նաև կգտնեք ևս 7 ենթակայքեր՝ համապատասխան մասնագիտացումների գծով:

Օտարալեզու գրականություն

Կարևորելով ցեղասպանությունների մասին գրականությունը ոչ միայն պատմության, այլ նաև քաղաքագիտության, քաղաքականության և իրավունքի տեսակետից, ԵՊՀ գրադարանը վերջին 2 տարում ձեռք է բերել շուրջ 100 միավոր անգլերեն և գերմաներեն լեզուներով հեղինակավոր հրատարակչությունների կողմից տպագրված գրականություն, որոնց հիմնական մասը հայաստանյան գրադարաններում չունեն երկրորդ օրինակը: Այստեղ հարկ է նշել, որ նշված գրականության հեղինակներն են ինչպես օտարերկրյա հետազոտողներ, այնպես էլ արտերկրում բնակվող հայեր և թուրքեր: Գրականության մի մասն ունի հակահայկական բնույթ, ինչը կարևորվում է ԵՊՀ-ի կողմից՝ հետազոտական նպատակով: Հարկ է նշել, որ ԵՊՀ գրադարանը պարբերաբար համալրվում է նվիրատվությամբ, որոնց մեջ հանդիպում են նաև ցեղասպանություններին վերաբերվող գրականություն: Այստեղ հատուկ կցանկանայի առանձնացնել տիկին Կատյա Փելթեկյանի աշխատասիրությամբ երկհատորյակը՝ *The Times of The Armenian Genocide. Reports in The British Press. In 2 volumes. Four Roads. Beirut. 2013 (1914-1919, 1920-1923)*, որն իրենից ներկայացնում է բրիտանական 3 հայտնի ամսագրերում (*The Times, The Sunday Times, The Munchester Guardian* ներկայումս հայտնի ինչպես *The Guardian*) հայերի ցեղասպանությանը նվիրված հոդվածների ժողովածու: ԵՊՀ-ում ցեղասպանությանը վերաբերող օտարալեզու գրականության ձեռքբերումը շարունակվում է:

Օտարերկրյա ականատեսների վկայությունների թարգմանություններ

Սա շատ հաջող կատարվում է ԵՊՀ-ում մի շարք գիտաշխատողների կողմից: Այստեղ կարելի է առանձնացնել կանադայում բնակվող պրոֆեսոր Դորա Սաքայանին, ով իր աշակերտների հետ թարգմանել է ավելի քան 10 վկայություններ՝ գերմաներեն կամ անգլերեն լեզուներից: Տիկին Դորան ամեն տարի հայերի համար անձանոթ գոնե մեկ գիրք է հրամցնում հայ ընթերցողին: Ամեն տարի Հայաստան այցելելիս և իր նոր գրքի շնորհանդեսից հետո ներկայացվում է իր նոր աշխատանքը, որը մեկ տարի հետո պատրաստ է լինելու: Տեղին է նշել նրա կատարած աշխատանքներից մի քանիսը

- Յակոբ Քյունցլեր Երեսուն տարի ծառայություն արևելքում: ԵՊՀ հրատ. 2008, 102 էջ: (թարգմանություն գերմաներենից):
- Յակոբ Քյունցլեր Արյան և արցունքի երկրում: Տպավորություններ Միջագետքից աշխարհամարտի տարիներին (1914-1918): Երևան, ԵՊՀ հրատ. 2011, 210 էջ: (թարգմանություն գերմաներենից):
- Վիլհելմ Բաում Թուրքիան և նրա քրիստոնյա փոքրամասնությունները: Երևան, ԵՊՀ հրատ. 2010, 220 էջ: (թարգմանություն գերմաներենից):
- Գյունթեր Ֆոքս, Հանս Ուլրիխ Լյուդեման Մարդասպանի սպանությունը: Երևան, ԵՊՀ հրատ. 2008, 116 էջ: (թարգմանություն գերմաներենից):
- Զմյուռնիա – 1922. Բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագիրը: Երևան, ԵՊՀ հրատ. 2011, 200 էջ: Կա նաև անգլերեն տարբերակը:

Թարգմանություններ կատարվել են նաև ֆրանսերենից, որոնց մեծ մասը աշխատասիրությամբ գիտաշխատող Վարուժան Պողոսյանի: Արժանի է հիշատակման

- Ռենե Պյուռ Զմյուռնիայի վախճանը. Զմյուռնիայի վերջին օրերը: Երևան, ԵՊՀ հրատ. 2012, 110 էջ: (թարգմանություն ֆրանսերենից):
- Արթուր Պեյլերյան Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում [1914-1918]: Երևան, Հայաստան հրատ. 2005, 2 հատորով: (թարգմանություն ֆրանսերենից):
- Համիդյան կոտորածները ֆրանսիացի ժամանակակիցների հրապարակային ելույթներում: Երևան, ԵՊՀ հրատ. 2013, 176 էջ: (ֆրանսերեն լեզվով) և այլն:

ԵՊՀ-ի համար մեծ կարևորություն ունի ոչ միայն ցեղասպանության վերաբերյալ տարբեր լեզուներով հրատարակված գրականությունը, այլ նաև արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությունը: Որոշ արխիվներում կատարվել են ուսումնասիրություններ և տպագրվել գրքեր կամ հոդվածներ: Անգամ «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին» և «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման մասին» արձանագրությանների քննարկման ժամանակ ՀՀ նախագահ Ս.Սարգսյանը կարևորեց օսմանագետների խնդիրը: Քանզի արխիվների բացման դեպքում ներկայիս թուրքագետները չեն կարողանա պրոֆեսիոնալ ձևով աշխատել դրանց հետ: Ներկայումս ԵՊՀ մագիստրոսներ և ասպիրանտներ են ուսանում Սանկտ-Պետերբուրգում՝ օսմանագիտություն մասնագիտությամբ:

Ցեղասպանագիտության գրականության ցուցահանդեսներ պարբերաբար կատարվում են ԵՊՀ-ում: Իսկ մինչև 2015թ. ապրիլի 24-ը՝ ցեղասպանության 100 ամյակը, ԵՊՀ գրադարանում կբացվի ցեղասպանագիտության կաբինետ, որտեղ օգտվողները կգտնեն ԵՊՀ գրադարանում առկա ցեղասպանությունների մասին ողջ գրականությունը: